ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ՀՈՒԼԻՍԻ 2020թվականի N 75

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 04.06.2020ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 62 և ԹԻՎ 66 ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի պահանջով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է***՝

Տալ համաձայնություն.

1. Արենի համայնքի ավագանու 2020 թվականի հունիսի 4-ի «2020 թվականի մարտի 17-ից մայիսի 26-ը ընկած ժամանակահատվածում, նոր տեսակի կորոնավիրուսի տարածման կանխարգելիչ միջոցառումների շրջանակներում, Արենի համայնքի վարչական տարածքում արտաժամյա հերթապահություն իրականացրած համայնքապետարանի աշխատակազմի և Արենի ՀՈԱԿ-ի աշխատակիցների անդամներին սահմանված դրույքաչափի 50%-ի չափով հավելավճար հատկացնելուն համաձայնություն տալու մասին» թիվ 62 որոշման մեջ կատարել փոփոխություններ և լրացումներ.

ա) որոշման վերնագրում և բովանդակության մեջ. <<համայնքապետարանի աշխատակազմի>> բառերից հետո ավելացնել <<ելփին բնակավայրի վարչական ղեկավարին>> բառերը, հավելավճար բառը փոխարինել պարգևավճար բառով,

բ) որոշման հավելվածից հանել 1-ին կետը. <<1. Հուսիկ Սահակյան, 430 000 ՀՀ դրամ, 215 000 ՀՀ դրամ>>,

2. Արենի համայնքի ավագանու 2020 թվականի հունիսի 4-ի <<Արենի համայնքի սեփականություն հանդիսացող էքսկավատոր-ամբարձիչը <<Արենի>> ՀՈԱԿ-ին անհատույց օգտագործման իրավունքով փոխանցելուն համաձայնություն տալու մասին>> թիվ 66 որոշման հղման մեջ ավելացնել <<հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածը>> բառերը:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ